



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/132/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

22 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի մայիսի 22-ին քննելով ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Վաչիկ Բորիսի Աղասյանի ընտանիքի անդամ Սանդուխտ Վալերյայի Էվանյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/132/2025 վարչական գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ Վաչիկ Բորիսի Աղասյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ՝ Սանդուխտ Վալերյայի Էվանյանի գույքային դրությունը, այդ թվում նաև՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

2011 թվականից Սանդուխտ Էվանյանին սեփականության իրավունքով պատկանել է [REDACTED] մակնիշի տրանսպորտային միջոցը, որը 2023 թվականի փետրվարի 21-ին 500,000 ՀՀ դրամով օտարվել է, մինչդեռ նշված տրանսպորտային միջոցի և դրա օտարման վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն Հայտարարագրում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 2-ին Սանդուխտ Էվանյանին հասցեագրել է թիվ 01/1841-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Սանդուխտ Էվանյանը ստացել է 2025 թվականի մայիսի 10-ին (հիմք՝ AL 0127783767AM անդորրագիրը):

1.3 2025 թվականի մայիսի 20-ին պատշաճ ծանուցված Սանդուխտ Էվանյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 85/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Սանդուխտ Էվանյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 22-ին, ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սանդուխտ Էվանյանը 2025 թվականի մայիսի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «(...) տրանսպորտային միջոցը իմ կողմից փաստացի վաճառվել է 2021 թվականին, սակայն պետական գրանցումը իրականացվել է 2023 թվականի փետրվարի 21-ին և քանի որ Վաչիկ Աղասյանը հայտարարատու պաշտոն է ստանձնել 2022 թվականին, հետևաբար 2022 և 2023 թվականների դրությամբ նշված տրանսպորտային միջոցը այլևս ինձ չի պատկանել և դրանով պայմանավորված չի հայտարարագրվել իմ կողմից ներկայացված հայտարարագրում:

Նշված մեքենան վաճառվել է ընդամենը 500.000 ՀՀ դրամով, որը եղել է 1996 թվականի արտադրության և իրենից մեծ արժեք չի ներկայացրել: Դրա վաճառքից եկամուտը ստացվել է 2021 թվականին հետևաբար հայտարարագրման ենթակա տվյալ չի հանդիսացել՝ այդ իսկ պատճառով չի հայտարարագրվել:

Ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից կայացված որոշումները նմանատիպ դեպքերի վերաբերյալ պարզել եմ, որ նույնական փաստական հանգամանքներ են առկա եղել նաև 2021 թվականի մարտի 5-ին կայացված՝ 05/21 որոշմամբ՝ Լիպարիտ Մելիքջանյանի վերաբերյալ կայացված:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովին խնդրում եմ սույն դեպքում ևս կարճել վարչական վարույթը և իմ կողմից բացթողումը համարել նվազ նշանակության՝ կիրառելով միատեսակ վարչարարություն»:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/132/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների վերլուծություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Վաչիկ Բորիսի Աղասյանի՝

պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում հայտարարագրված տվյալների համաձայն Սանդուխտ Վալերյայի Էվանյանը հանդիսանում է նրա հետ համատեղ բնակվող չափահաս անձ:

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Սանդուխտ Վալերյայի Էվանյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 Սանդուխտ Էվանյանին 2011 թվականից սեփականության իրավունքով պատկանել է [REDACTED] մակնիշի տրանսպորտային միջոց, որը 2023 թվականի փետրվարի 21-ին 500,000 ՀՀ դրամով օտարվել է, մինչդեռ նշված տրանսպորտային միջոցի և դրա օտարման վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն ՀՀ հայտարարագրում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, (...):

Նույն օրենքի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում է տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ եկամուտների հայտարարագիրը ներառում է եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և (կամ) պարտադիր այլ վճարների, ինչպես նաև գույքային իրավունքներից ստացված եկամուտները, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված

եկամուտները ինչպես նաև գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտները: Սույն հոդվածի համաձայն եկամուտները հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝

հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Վաչիկ Բորիսի Աղասյանի ընտանիքի անդամ Սանդուխտ Վալերյայի Էվանյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է՝ Հայտարարագրի «Բ.2 Տրանսպորտային միջոց» բաժնում և «Գ.1.1 Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում չի հայտարարագրել 2011 թվականից իրեն սեփականության իրավունքով պատկանող [REDACTED] մակնիշի տրանսպորտային միջոցի օտարման և դրա արդյունքում ստացված եկամուտի վերաբերյալ տվյալները, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև արարքը ձևականորեն կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Սանդուխտ Էվանյանը 2011 թվականից իրեն սեփականության իրավունքով պատկանող [REDACTED] մակնիշի տրանսպորտային միջոցի 2023 թվականի փետրվարի 21-ի օտարման գործարքը և դրա արդյունքում ստացված 500,000 ՀՀ դրամ եկամուտը չհայտարարագրելով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի պահանջները և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք: Այդուհանդերձ նկատի ունենալով այն, որ Սանդուխտ Էվանյանի կողմից ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ տրանսպորտային միջոցի օտարման գործարքը փաստացի կատարվել է 2021 թվականին և նշված տրանսպորտային միջոցը 2021 թվականից Սանդուխտ Էվանյանի կողմից փաստացի չի շահագործվել, ինչպես նաև այն, որ տրանսպորտային միջոցի օտարման արդյունքում նա 500,000 ՀՀ դրամ եկամուտը ստացել է 2021 թվականին, երբ նա հայտարարտու անձ չի հանդիսացել, Հանձնաժողովը գտնում է, որ հայտարարատու անձի գույքային դրության բացահայտման, գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության տեսանկյունից վերջինիս կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սանդուխտ Վալերյայի Էվանյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սանդուխտ Վալերյայի Էվանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Սանդուխտ Վալերյայի Էվանյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ